ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2011, 64, № 3, 66-67

ՀԱՅԿ ԱՂԱԲԵԿԻ ՂԱԶԱՐՅԱՆ
(1921-2011)

2011թ. օգոստոսին, 90 տարեկան հասակում, կյանքից հեռացավ վաստակաշատ երկրաբան, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1963-1990թթ. ինստիտուտի Վարդենիսի գիտահետազոտական բազայի վարիչ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու Հայկ Աղաբեկի Ղազարյանը:

Հ.Ղազարյանը ծնվել է 1921թ. մայիսի 8-ին, Արարատի մարզի Չանախչի (այժմ՝ Զանգակատուն) գյուղում: 1938թ., ավարտելով Երևանի Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցը, երկու տարի աշխատել է որպես տեխնիկ:

1940թ. Հ.Ղազարյանն ընդունվել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ, սակայն ժողովրդի թշնամու զավակի պիտակով հեռացվել է համալսարանից և աշխատել մի շարք շինարարական կազմակերպություններում: 1944թ.-ից շարունակել է ուսումը և 1948թ. ավարտել համալսարանը՝ ստանալով երկրաբանի որակավորում:

1948թ. Հ.Ղազարյանը աշխատանքի է նշանակվել Ղազախստանի ԽՍՀ Կարագանդայի երկրաբանական վարչությունում և աշխատել Ջետի-Կզի, Սազ-Տյուբե, Կոլդիբայ-Շոքո հանքավայրերում սկզբում երկրաբանի, ապա արշավախմբի պետի պաշտոններում: 1951-1953թթ. ղեկավարել է Կենտրոնական Ղազախստանի Եշկե-Ուլմես խրիզոտիլ-ասբեստի խոշոր հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքները:

1953թ. Հ.Ղազարյանը ընդունվել է Հայաստանի ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ասպիրանտուրան պետրոգրաֆիա մասնագիտությամբ: Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր, ճանաչված գիտնական Վ.Կոպտև-Դվորնիկովի ղեկավարությամբ անցնելով պետրոգրաֆիայի փայլուն դպրոց, Հ.Ղազարյանը դարձավ բարձրակարգ մասնագետ և իր ամբողջ հետագա գիտական գործունեությունը կապեց Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ:

Առաջին տարիներին նրա կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքներն առնչվում են Սոմխեթո-Ղարաբաղյան

գոտու մագմատիկ ապարների պետրոգրաֆիայի, նյութական կազմի, առաջացման պայմանների, նրանց հետ կապված օգտակար հանածոների հանքավայրերի և այլ հարցերի պարզաբանման հետ:

1963թ. Հ.Ղազարյանը Մոսկվայի Պետական համալսարանում հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական թեզն՝ արժանանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

1963-1990թթ. Հ.Ղազարյանը ղեկավարել է ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Վարդենիսի գիտահետազոտական բազան՝ զբաղվելով Սևանի ավազանի երկրաբանական կառուցվածքի, մագմատիկ ապարների և, մասնավորապես, Սոտքի (Զոդ) հանքավայրի շրջակայքի երկրաբանական քարտեզագրական աշխատանքներով: Նրա հետազոտություններն ուղղված էին նաև օֆիոլիթային համալիրներ կազմող գոյացումների պետրոգրաֆիական, երկրաբանա-հասակային բնութագրերին և առաջացման պայմաններին առնչվող հարցերին:

Հ.Ղազարյանի հետագա տարիների ուսումնասիրությունները նվիրված էին գլխավորապես Վայոց Զորի շրջանի և Վարդենիսի լեռնաշղթայի մեզո-կայնոզոյան հասակի լայն տարածում ունեցող հրաբխածին, էքստրուզիվ և ինտրուզիվ առաջացումների երկրաբանական քարտեզագրությանը, պետրոգրաֆիական առանձնահատկություններին, առաջացման պայմաններին և դրանց հետ կապված օգտակար հանածոների հանքավայրերի ձևավորման խնդիրներին:

Հ.Ղազարյանը հեղինակ է շուրջ 70 տպագիր գիտական հոդվածների, համահեղինակ 4 մենագրությունների և 17 ձեռագիր գիտական աշխատությունների:

Նրա երկարամյա և անբասիր գործունեությունն արժևորվել է մի շարք Կառավարական պարգևներով և ՀՀ ԳԱԱ Նախագահության Գովեստագրով:

Երկրաբանության տարբեր բնագավառներում Հ.Ղազարյանի ձեռք բերած գիտական նվաճումներն իրենց արժանի տեղն են գրավում հանրապետության տարածքի երկրաբանական կառուցվածքի տարբեր խնդիրների պարզաբանման գործում: Նա մեծ հեղինակություն էր վայելում երկրաբանական հանրության շրջանում որպես պետրոգրաֆիայի հմուտ մասնագետ, ով իր գիտելիքները սիրով փոխանցում էր գործընկերներին և երիտասարդներին:

Բազմավաստակ գիտնականի, մարդկային բարձր արժանիքներով օժտված համեստ, ընկերասեր անձնավորության, ընտանիքի նվիրված հոր և արժանի քաղաքացու հիշատակը վառ կմնա գործընկերների և բոլոր նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին"
տեղեկագրի խմբագրություն